ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 33-Լ «17» հոկտեմբեր 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 11-Լ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՈՒՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 1880-Լ որոշմամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 11-Լ հրամանը:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

/պաշտոնակատար/

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Подписано: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2021 թվականի հունիսի 17 -ի N 33-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնադրությամբ կարգավորվում են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի (այսուհետ բաժին) խնդիրների, գործունեության, ղեկավարման և ենթակայության, իրավունքների և պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

2. Բաժնի կառուցվածքը և կազմը որոշում է նախարարը՝ ելնելով զորահավաքային ծրագրի արդյունավետ կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

II. ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Բաժնի գործունեությունն ուղղված է ապահովելու խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (այսուհետ նախարարություն) վերապահված լիազորությունների իրագործման և ենթակա զորահավաքային առաջադրանքներ կատարող կազմակերպությունների (այսուհետ կազմակերպություններ) պարտականությունների արդյունավետ կատարումը:

4. Բաժնի խնդիրներն են՝

1) նախարարության և զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններում ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային նախապատրաստության ապահովման կազմակերպումը.

2) զորահավաքային պլանների համաձայն՝ զորահավաքի ժամանակ զինված ուժերի և այլ զորքերի համալրումն ու նյութատեխնիկական ապահովման կազմակերպումը.

3) նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրմանն օժանդակումը:

5. Խաղաղ ժամանակ և Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում, բաժնի խնդիրներից բխող գործառույթների շրջանակում՝

1) բաժինը իրականացնում է՝

ա. նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

բ. զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստության ապահովումը,

գ. նախարարությունում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

դ. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հանրակրթական և նախնական /արհեստագործական/ կրթական ծրագրերով սովորող 18 և 19 տարին լրացած ՀՀ քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու մշակման և իրականացման աշխատանքներ,

ե. «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» հայաստանի հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով նախարարության համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը.

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

6. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Սահմանադրությամբ, օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով և նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմների փոխադրման ներքին պլանով:

7. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է կանոնադրությամբ և բաժնում պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնների անձնագրերի համաձայն:

8. Նախարարությունը, ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպություններն ապահովվում են բաժնի գործունեության համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններով, պետական և ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվության համապատասխան ձևերով:

9. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է գլխավոր քարտուղարի հրամանով նշանակված պաշտոնատար անձը:

IV. ԲԱԺՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

10. Բաժինը ղեկավարում է բաժնի պետը:

11. Բաժնի պետը ենթակա է նախարարին, համապատասխան նախարարի տեղակալին և գլխավոր քարտուղարին:

V. ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Բաժնի իրավունքներն են՝

1) իրեն վերապահված խնդիրների և գործառույթների իրականացման առնչությամբ կազմակերպել քննարկումներ, հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության դրանց մասնակից դարձնելով նախարարության և նախարարությանը ենթակա կազմակերպությունների պաշտոնատար անձանց, մասնագետների և փորձագետների, որոնք առնչվում են զորահավաքային առաջադրանքով նախատեսված աշխատանքների իրականացմանը և աշխատանքների արդյունքներից ելնելով ներկայացնել առաջարկություններ.

2) նախարարության ղեկավարության համաձայնությամբ հանդես գալ միջգերատեսչական կամ փոխգործակցային մակարդակում՝ որպես նախարարության ներկայացուցիչ.

3) առաջարկություններ ներկայացնել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի աշխատանքների կատարելագործման վերաբերյալ.

4) խաղաղ և ռազմական դրության ժամանակ օրենքով սահմանված կարգով վերահսկել նախարարության ենթակա մարմինների, ստորաբաժանումների զորահավաքային նախապատրաստության, քաղաքացիական պաշտպանության, ինչպես նաև համակարգման ոլորտում գտնվող՝ ռազմական դրության աշխատանքային ռեժիմի պայմաններում զորահավաքային առաջադրանք կատարող կազմակերպությունների՝ զորահավաքային պատվերների կատարման պայմանագրերով նախատեսված զորահավաքային միջոցառումների կատարման աշխատանքները.

5) իր իրավասությունների սահմաններում համակարգում է զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի հետ կապված միջոցառումները.

6) իր իրավասությունների սահմաններում համակարգում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հանրակրթական և նախնական /արհեստագործական/ կրթական ծրագրերով սովորող 18 և 19 տարին լրացած ՀՀ քաղաքացիների շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում տրամադրելու մշակման և իրականացման աշխատանքները:

13. Բաժնի պարտականություններն են՝

1) նախարարության գործունեությունը ռազմական դրության աշխատանքային ռեժիմի փոխադրման, զորահավաքային և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքների մեթոդական, տեղեկատվական և կազմակերպական աջակցությունը և մասնակցությունն այդ պլանների իրագործմանը,

2) զորահավաքային նախապատրաստության շրջանակներում կազմակերպվող ուսումնավարժական հավաքներին և պարապմունքներին մասնակցության նախապատրաստության ապահովումը,

3) նախարարությունում աշխատող պահեստազորայինների ամրագրման աշխատանքների ապահովումը, նրանց զինվորական հաշվառման, պահեստազորային պատրաստության միջոցառումներին և զորահավաքային

զորակոչին ներգրավման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանքները զինվորական հաշվառում իրականացնող մարմինների հետ,

4) «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանցից բխող նորմատիվ իրավական ակտերով նախարարության համար սահմանված այլ միջոցառումների իրականացման ապահովումը:

14. Բաժնի պետը պատասխանատու է բաժնի առջև դրված խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացման համար: